Հարգելի՛ գործընկերներ,

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը Պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ **2021 թ. մայիսի 6-ին** կազմակերպում է աշխատաժողով՝ նվիրված անվանի հայագետ, տոմարագետ, կանոնագետ Ռաֆիկ Վարդանյանի հիշատակին:

Աշխատաժողովին զեկուցումներ կարող են ներկայացվել հետևյալ թեմաներով՝

➡️ պատմագրություն,
➡️ ձեռագրագիտություն,
➡️ տոմարագիտություն,
➡️ կանոնագիտություն,
➡️ աստվածաբանություն,
➡️ աղբյուրագիտություն

Կարևոր է՝ ներկայացվելիք զեկուցումների թեմաները առնչվեն նաև Ռաֆիկ Վարդանյանի աշխատությունների քննությանը, վերլուծմանը և արժևորմանը:
Աշխատաժողովին կարող են մասնակցել ուսանողներ, ասպիրանտուրայի սովորողներ, հայցորդներ, գիտության թեկնածուներ, որոնց ներկայացվելիք թեմաներն առնչվում են վերոնշյալ բնագավառներին:

Աշխատաժողովի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար կազմկոմիտեն սահմանել է հետևյալ ժամանակացույցը՝

✔️մինչև սույն թվականի **ապրիլի 8-ը** աշխատաժողովի կազմկոմիտեին պետք է ներկայացնել զեկուցման հիմնադրույթները 350-400 բառի սահմաններում՝ ներառյալ զեկուցման թեման, մասնակցի անունը և ազգանունը, ինչպես նաև այն հաստատությունը, որը ներկայացնում է զեկուցողը (անկախ հետազոտողները նույնպես կարող են մասնակցել): Հիմնադրույթները պետք է արտացոլեն ներկայացվելիք զեկուցումը և ուսումնասիրության նպատակը:

➡️Խնդրում ենք հիմնադրույթներն ուղարկել ssstheology.com էլ. հասցեին:

Մինչև սույն թվականի **ապրիլի 25-ը** դրական կարծիքներ ստացած հիմնադրույթների հեղինակները հնարավորություն կստանան ներկայացնելու իրենց զեկուցումները մայիսի 6-ին ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Աճեմյան գրադարանում կայանալիք աշխատաժողովին:

Հ. Գ. Համավարակային իրավիճակի թելադրանքով՝ գիտաժողովը կարող է անցկացվել նաև առցանց տարբերակով: Այդ մասին հետագայում կտրվեն լրացուցիչ տեղեկություններ:

Կարևորելով արտահամալսարանական համագործակցությունը՝ ուրախ կլինենք, որ աշխատաժողովին ցուցաբերեք ակտիվ և արդյունավետ մասնակցություն: